ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՃՇՄԱՐԻՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՂԸ

Վենետիկից եկած հեռագիրը գուժեց Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Սահակ ծայրագույն վարդապետ Ճեմճեմյանի մահը:

Հայր Սահակի ողջ կյանքը եղավ կենդանի մարմնավորումը մխիթարյան առաքելության՝ հեռավոր Ադրիատիկի ափերի, մի փոքր Հայաստանի վերածված մի փոքրիկ կղզյակում՝ Ս. Ղազարում, վառ պահել հայ մշակույթի ջահը: Նա իր կյանքով նաև ճշմարիտ կերպով վկայեց, թե ինչպիսին պետք է լինի մերօրյա վանական գիտնականը: Տարիների տքնաջան աշխատանքով մխիթարյան գրապահոցներից ու եվրոպական տարբեր դիվանական արխիվներից բազմահազար ձեռագրերի ու վավերագրերի քննությամբ Հ. Սահակը հավաքեց իրեն անհրաժեշտ այն նյութերը, որոնց հիման վրա հայագիտության մեջ լուսաբանման կարոտ մի շարք հարցերի պատասխանները տվող փաստալից իր ուսումնասիրությունները գրեց:

Նրա անգամ նեղ բանասիրական և վավերագրական բնույթի գործերում իսկ զգալի է Հայաստանի հանդեպ այն մեծ սերը, որով իրենց կյանքը իմաստավորեցին Մխիթար Սեբաստացին, Ներսես Սարգիսյանը, Ղևոնդ Ալիշանը ու մխիթարյան մյուս մեծերը: Ոչ միայն գիտական հետաքրքրությունները և աղբյուրագիտական որոնումները, այլև այդ մեծ սերն էր, որ նրան քանիցս բերեց Հայաստան՝ դարձնելով նաև կենդանի մի կամուրջ հայրենի ու եվրոպական հայագիտության միջև:

Այսօր Մխիթարյան միաբանության հետ սգալով միաբանության ընդհանուր աբբահայր և հայագիտության նվիրյալ մշակ Հ. Սահակ ծայրագույն վարդապետ Ճեմճեմյանի անժամանակ մահը, մաղթում ենք, որ Հ. Սահակի հիշատակին կանգնեցված ամենամեծ հուշարձանը դառնա Լուսանորոգ Մխիթարի սկզբնավորած մեծ գործի շարունակումը Մխիթարյան միաբանության հարկի ներքո: